ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ԽԱ/18-2025
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
16 հուլիսի 2025 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Վարչապետի խորհրդական (խորհրդի նախագահի տեղակալ)	Ա. Թումանյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (խորհրդի անդամներ)՝

Արդարադատության նախարարի տեղակալ	Ա. Կարապետյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ	Դ. Դանիելյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ	Ա. Վարդանյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ	Վ. Ասցատրյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի գլխավոր մասնագետ (խորհրդի քարտուղար)	Ն. Գուլյան
«Հայաստանի ասորական «Խայաղթա» ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ի. Գասպարյան
«Հայաստանի «Աթուռ» ասորական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ա. Միխայլով
Հայաստանի «Երևանի բելառուսների համայնքի «Բելառուս» հասարակական կազմակերպության նախագահ	Ի. Պողոսյան
«Մենորա» հրեական մշակույթի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ	Վ. Վայներ
«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպության նախագահ	Ս. Ավդալյան
«Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպության նախագահ	Խ. Հաջոյան
«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահ	Կ. Հասանով
«Քուրդիստան կոմիտե» հասարակական կազմակերպության նախագահ	Ս. Դրբոյան
«Տևտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպության նախագահ	Վ. Վուլխրեր
Հայաստանի Հանրապետության «Ռոսիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ե. Հակոբյան
«Հայաստանի հունական համայնքների միություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ	Ք. Ռաֆայելովա
«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության փոխնախագահ	Ն. Սպանդերաշվիլի
Հայաստանի « Երևանի բելառուսների համայնքի «Բելառուս» հասարակական կազմակերպության անդամ	Մ. Սիմոնյան

Երևանի «Պոնտի» հունական հասարակական կազմակերպության անդամ	Է. Պողոսյան
«Տևտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպության անդամ	Մ. Մինասյան
Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպության անդամ	Ս. Բաղդասարյան
Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպության անդամ	Ի. Կոնցևիչ
«Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն հասարակական կազմակերպության անդամ	Ա. Հարությունյան
«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպության անդամ	Ա. Մինասյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ	Լ. Գրիգորյան
Արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության պետ	Կ. Սուջայան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ	Ա. Գիլոյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ	Ռ. Ղլեչյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ	Լ. Բասենցյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Նիստը վարողի կողմից առաջարկվեց հաստատել խորհրդի նիստի օրակարգը:

Որոշվեց՝ հաստատել օրակարգը

Ձայների հարաբերակցությունը՝ միաձայն

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային 1-ին հարց՝ ՀՀ ազգային փոքրամասնությունների օրվան նվիրված համատեղ մշակութային միջոցառումների կազմակերպման մասին

Զեկուցող՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյան

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին

1. Ընդունել ի գիտություն Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի գլխավոր մասնագետ Նարինե Գուլյանի դիտարկումն առ այն, որ որոշման հաստատումից հետո պայմանագիր կկնքվի «Հայաստանի հունական համայնքների միություն» հասարակական կազմակերպության հետ՝ համատեղ միջոցառման համար նախատեսված գումարը (1 մլն 2000 դրամ) փոխանցելու նպատակով:

Օրակարգային 2-րդ հարց՝ հաղորդում ՀՀ ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի անդամների Արագածոտնի մարզ կատարած այցելության և այդ ընթացքում բացահայտված մի շարք խնդիրների և դրանց լուծումների ընթացքի մասին

Զեկուցող՝ Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյան

Որոշվեց՝ ընդունել զեկույցն ի գիտություն

Օրակարգային 3-րդ հարց՝ հաղորդում ՀՀ ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի նախորդ նիստերի ընթացքում տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին

Զեկուցողներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ասատուր Վարդանյան, Արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյան, Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյան

Որոշվեց՝ ընդունել զեկույցներն ի գիտություն

1. Քննարկման ընթացքում հնչեցին նաև հետևյալ էական դիտարկումները՝

1) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն առաջարկեց՝

1.1 իբրև ՀՀ ազգային փոքրամասնությունների օրվան նվիրված համատեղ մշակութային միջոցառման անցկացման վայր դիտարկել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքը.

1.2 ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների առաջարկով և օգնությամբ մասնագիտացված խոհարարների կողմից պատրաստվեն ազգային խոհանոցի նմուշներ, որոնք կցուցադրվեն ՀՀ ազգային փոքրամասնությունների օրվան նվիրված միջոցառման ընթացքում:

2) ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուների մասնագիտացված որակավորման համակարգ ստեղծելու մասով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ Լուսինե Գրիգորյանը տեղեկացրեց, որ ներկայումս ակտիվ քննարկումներ են ընթանում ԵՊՀ-ում լաբորատորիա հիմնելու հարցի շուրջ՝ հավելելով, որ մինչև ընթացիկ տարվա վերջ վերջինիս ծախսերի նախահաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

3) «Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահ Կնյազ Հասանովը՝

3.1 առաջարկեց Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին ուշադրության կենտրոնում պահել Կառավարության կողմից հատկացված քվոտաների սահմաններում ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների անվճար ուսուցման իրավունքի պահպանման հարցը, քանի որ ԲՈՒՀ-ում գործող ռոտացիոն համակարգի արդյունքում տվյալ ուսանողը զրկվում է անվճար ուսուցման իրավունքից.

3.2 կարևորեց ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում Կառավարության աջակցությամբ կառուցված հանդիսությունների սրահի արտաքին բարեկարգման նպատակով ֆինանսավորման միջոցների ապահովումը (շուրջ 60 մլն դրամ):

4) Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյանն առաջարկեց Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ Լուսինե Գրիգորյանին խորհրդի տարեվերջյան նիստում ԵՊՀ-ում լաբորատորիա հիմնելու ծախսերի նախահաշիվների վերաբերյալ տեղեկատվության հետ մեկտեղ հաղորդում տալ նախորդ նիստում տրված հանձնարարականի վերաբերյալ՝ կապված ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուների հեռավար ուսուցման հնարավորությունների հետ:

5) Վարչապետի խորհրդական, խորհրդի նիստի նախագահող Արտաշես Թումանյանն առաջարկեց հաջորդիվ իրականացվող մարզային այցելություններում ներգրավել նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների առնվազն տվյալ մարզում հոծ բնակեցված համայնքները ներկայացնող խորհրդի անդամներին:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
(ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ) ԱՐՏԱՇԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ